

ԳՆԻԻ. ինքնակալեալ ամս ժԿ: Էջ
 սա գեղեցկապէս կարգաւորեալ սահմանօք
 նման հօրն իւրոյ թէոզոսի: Մնա ասէին՝
 ընդէ՛ր ոչ սպանանես զապստամբան. պա-
 տասխանէր՝ ո թէ՛ և զսպանեալն կարէաք
 յարուցանել: Ի սորին ժամանակս բռնա-
 ւոր ոմն՝ անուն շերովղիանոս, ԳՈՇ.
 նաւօք եկն յԱփրիկոյ ՚ի շոօմ՝ ՚ի վերայ
 Աոստանց տուկին, զոր թաղաւորն ՚ի
 Աոստանդնուպօլսէ յղեալ էր պահապան
 քաղաքին շոօմայ. զոր ելեալ Աոստանց
 ՚ի վերայ շերովղիանոսի ՚ի պատերազմ՝
 զամենայն զօրսն նորա կոտորեաց, միայն
 շերովղէս փախեալ զերծաւ: Այս Անո-
 ըրիոս բարի մահուամբ վախճանեցաւ՝ ոչ
 թողեալ ժառանգ արու զաւակ, բայց երկու
 դուստր՝ Մարիա և շելենցիա. նմին հօրն
 հետևեցան մահուամբ երկօքեան սոքա ՚ի
 մի օր՝ սակաւ աւուրբք զինի մահուան հօրն
 իւրեանց՝ մեռան. յաւուրս սորա Աիւրեղ
 Աղէկսանդրացին փայլեաց յերկրի, և
 Զերոնիմոս Չ. ամաց վախճանի ՚ի Տէր: